ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

N ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-22/10 ծածկագրով գնանշման հարցումով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Ջրվեժ

«10» փետրվարի 2022թ.
ժամը 10:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ն.Սանթրոսյան,
Հանձնաժողովի անդամներ՝ Ս.Թադևոսյան, Հ.Գրիգորյան,
Հանձնաժողովի քարտուղար՝ Տ.Իսոյան

Պատվիրատուն՝ Ջրվեժի համայնքապետարանը, որը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզ, Ջրվեժ Մելքոնյան 76 հասցեում, ստորև ներկայացնում է «ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-22/10» ծածկագրով Ջրվեժ համայնքի Համայնքային ուսումնամշակութային զարգացման կենտրոնի կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների նպատակով հայտարարված գնանշման հարցումով ընթացակարգի բացման նիստի մասին համառոտ տեղեկատվություն:

N ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-22/10 ծածկագրով գնանշման հարցման հայտերի բացման մասին

1. Ընդունել ի գիտություն, որ գնանշման հարցմանը հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/Հ | Մասնակիցների անվանումը | Գտնվելու վայրը, հեռախոսահամարը |
|---|---|---|
| 1 | «Վանարխ» ՍՊԸ | ք.Վանաձոր, Վարդանանց 19-1, հեռ. 077 62 15 59, 091 21 79 36 |
| 2 | «ՄԱԼԿ» ՍՊԸ | ք.Գյումրի, Տիգրան Մեծի 1, հեռ՝ 0312 38888, 043 52 25 81 |
| 3 | «Նյու Արտ Նախագիծ» ՍՊԸ | ք.Երևան, Ծարավ Աղբյուր 55/7, հեռ՝ 098 121 821, |
| 4 | «Թ.Ա.Հ.Գ. Գրիգ» ՍՊԸ | ք.Երևան, Թոթովենցի 12/28, հեռ՝ 010 67 11 19, 093 67 11 19 |

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2. Ծրարների կազմման և ներկայացման համապատասխանությունը.

Համապատասխանում են՝ «Վանարխ» ՍՊԸ-ի, «ՄԱԼԿ» ՍՊԸ-ի, «Նյու Արտ Նախագիծ» ՍՊԸ-ի, «Թ.Ա.Հ.Գ. Գրիգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

3. Բացված ծրարում հրավերով նախատեսված փաստաթղթերի առկայությունը և դրանց կազզման համապատասխանությունը գնանշման հարցման հրավերով սահմանված վավերապայմաններին.

Համապատասխանում է՝ «Վանարխ» ՍՊԸ-ի, «ՄԱԼԿ» ՍՊԸ-ի, «Նյու Արտ Նախագիծ» ՍՊԸ-ի, «Թ.Ա.Հ.Գ. Գրիգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը:

4. Մասնակիցների կողմից առաջարկված գները հետևյալն են .

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Առաջարկված գինը (ՀՀ դրամով) | | |
|---|---|---|---|---|
| | | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ-ն | Առաջարկված ընդհանուր գինը |
| 1 | «Վանարխ» ՍՊԸ | 3 190 000 | - | 3 190 000 |
| 2 | «ՄԱԼԿ» ՍՊԸ | 13 920 000 | - | 13 920 000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3 | «Նյու Արտ Նախագիծ» ՍՊԸ | 2 430 000 | - | 2 430 000 |
| 4 | «Թ.Ա.Հ.Գ. Գրիգ» ՍՊԸ | 2 210 000 | - | 2 210 000 |

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

5. Ներկայացված գնային առաջարկի հիման վրա՝ հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակից ճանաչել.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը |
|---|---|
| 1 | «Թ.Ա.Հ.Գ. Գրիգ» ՍՊԸ |

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

6. Հանձնաժողովը որոշեց.

ա) Ընտրված մասնակից ճանաչել «Թ.Ա.Հ.Գ. Գրիգ» ՍՊԸ-ին, որպես բավարար գնահատված, նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

բ) «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունն ուղարկել հրապարակման:

գ) Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

7. ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-22/10 ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի կողմից իրականացված աշխատանքների արդյունքների ամփոփման նիստ հրավիրել գնման պայմանագիր կնքելու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 09:30-ին, հասցեն՝ Ջրվեժի համայնքապետարան՝ Կոտայքի մարզ, Ջրվեժ համայնք, գ. Ջրվեժ, Մելքոնյան 76:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝* *Ն.Սանթրոսյան*

*Անդամներ՝* *Ս.Թադևոսյան*

*Հ.Գրիգորյան*

*Քարտուղար՝* *Տ.Խոսյան*